



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4 փետրվարի 2026 թվական

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԱՐԴ/1261/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2026 թվականի հունվարի 29-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2025 թվականի դեկտեմբերի 18-ին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ստացվել Արտյոմ Սուրենի Առաքելյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ) թիվ 48202625 (ԱՐԴ/1261/01/25) քրեական վարույթը:

1.1. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Հ.Մելիսյան) 2025 թվականի դեկտեմբերի 19-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/1261/01/25 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի հունվարի 20-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/1261/01/25 քրեական վարույթն ըստ տարածքային ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր՝ Ժ.Չիչոյան) 2026 թվականի հունվարի 29-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/1261/01/25 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի հունվարի 30-ին:

Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

4. Արտյոմ Սուրենի Առաքելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ) հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«(...) [Նա] շահադիպական դրդումներով իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել, պահել և փեղափոխել է զգալի չափերով թմրամիջոց (2 դրվագ):*

Այսպես. Արտյոմ Սուրենի Առաքելյանը, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմեդիկամենտների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի և «Թմրամիջոցների և հոգեմեդիկամենտների (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության

թիվ 270-Ն որոշման պահանջները, այն է՝ չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցի շրջանառություն իրականացնելու՝ այն ձեռք բերելու, պահելու և տեղափոխելու թույլտվություն՝ քննությամբ չպարզված հանգամանքներում և ժամանակահատվածում շահադիտական դրդումներով, այն է՝ «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի վաճառքի արդյունքում իր համար գույքային օգուտ ստանալու մղմամբ իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել և պահել է Հայաստանի Հանրապետության կառավարության՝ «Թմրամիջոցների և հոգեմեկր (հոգեներգործուն) նյութերի մանր չափերը (...) սահմանելու մասին» 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման հավելված N 1-ի թմրամիջոցների ցանկի 81-րդ կետով նախատեսված զգալի չափերով՝ ընդհանուր 8,64 գրամ հաստատուն քաշով «մարիխուանա» տեսակի թմրամիջոց: Այնուհետև Ա.Առաքելյանն ապօրինի ձեռք բերված և իր մոտ պահվող վերոհիշյալ թմրամիջոցը սև պոլիէթիլենային տոպրակով՝ թվով 10 փաթեթների մեջ նույնչափ լցված, իրացման համար հարմար փաթեթավորված վիճակում իր կողմից շահագործվող ***** մակնիշի ** ** ** հաշվառման համարանիշի ավարտներնայով 2025 թվականի սեպտեմբերի 22-ին՝ ժամը 12:28-ի սահմաններում, իրացնելու նպատակով շահադիտական դրդումներով ապօրինի տեղափոխել է Երևան քաղաքի ***** ** հասցեի դիմաց և տեղադրել այդ հատվածում գտնվող քարե շինությանը հարակից ծառի տակ, որը հայրնաբերվել է թիվ 48202625 քրեական վարույթի շրջանակներում վերոհիշյալ վայրում 2025 թվականի հոկտեմբերի 09-ին կատարված դեպքի վայրի զննությամբ: (...):»¹:

5. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի հունվարի 20-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Քրեական գործերի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Արարյում Սուրենի Առաքելյանին 2 դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղաազրվել են իրացնելու նպատակով շահադիտական նպատակներով զգալի չափերով թմրամիջոցների ապօրինի ձեռք բերել, պահել և տեղափոխել:

(...)

¹ Տե՛ս քրեական վարույթ, հատոր 2, թերթեր 34-36:

Գալարանի գնահատմամբ Արդյուն Առաքելյանին մեղսագրված վերոհիշյալ արարքները հանդիսանում են րևող հանցագործություններ: Այսպես.

ՀՀ վճարելի դատարանը րևող հանցագործության ավարտման պահը պայմանավորում է արարքի դադարման պահի հետ և վերջինիս դրսևորման 2 եղանակ է ներկայացնում՝ առաջինը կապելով սուբյեկտիվ (մեղայականով ներկայանալ), իսկ երկրորդը՝ օբյեկտիվ (հանցանք կատարած անձից անկախ հանգամանքներ) փաստերի հետ: Սույն քրեական գործի շրջանակներում առկա է վերոհիշյալ դրսևորումներից երկրորդը, քանի որ ենթադրյալ վերագրվող արարքը դադարել է իրավապահ մարմինների միջամտությամբ: Ավելին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված վարույթային այն գործողությունները, որոնց արդյունքում հնարավոր է հայրնաբերել վարույթի համար նշանակություն ունեցող առարկաներ, նյութեր և այլ րվյալներ, կարող են ազդարարել րևող հանցագործության ավարտը միայն այդ վարույթային գործողության ավարտման փաստով:

Սույն դեպքում Արդյուն Առաքելյանին մեղսագրվող արարքներից վերջինը դադարել է 2025 թվականի հոկտեմբերի 09-ին՝ Երևան քաղաքի ***** ** հասցեի դիմաց կատարված դեպքի վայրի զննությամբ:

(...)

Այսպիսով, Գալարանը, հաշվի առնելով վերը նշված պարճառաբանությունը, Վճարելի դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները և ելնելով ընդդատության պահպանման վերը նշված պահանջներից ու պարզելով, որ սրացված գործն ընդդատյա չէ ՀՀ Արմավիրի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանին, գրնում է, որ գործի հետագա քննությունը ՀՀ Արմավիրի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանում անխուսափելիորեն կհանգեցնի մեղադրյալ Արդյուն Սուրենի Առաքելյանի արդար դատական քննության հիմնարար իրավունքի խախտման, իսկ արդյունքում կայացված դատական ակտը ցանկացած դեպքում ենթակա կլինի քեկանման:

Անփոփելով վերոգրյալը՝ Գաբարյանը գրնում է, որ անհրաժեշտ է թիվ ԱՐԴ/1261/01/25 քրեական գործն ըստ ընդդատության փոխանցել Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: (...)»²:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի հունվարի 29-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Գաբարյանն արձանագրում է, որ Արմավիրի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանն ըստ էության Արդյոմ Առաքելյանին առաջադրված մեղադրանքներից մեկով (Երևան քաղաքում կատարված ենթադրյալ հանցանքի դրվագով) ենթադրյալ հանցանքի ավարտման պահը պայմանավորել է Երևան քաղաքի ***** ** հասցեի հարակից հարվածում 2025 թվականի հոկտեմբերի 09-ին կատարված դեպքի վայրի զննության արդյունքում՝ իրացման նպատակով հիշյալ վայրում տեղադրված թմրամիջոցների հայրնաբերման փաստով, մինչդեռ Գաբարյանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի դիսպոզիցիայի վերլուծություններից ակնհայտ է դառնում, որ հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված գործողություններից սույնիսկ մեկի կատարմամբ արդեն իսկ արձանագրվում է հանցագործության ավարտման փաստը, իսկ սույն դեպքում՝ Երևան քաղաքում ենթադրաբար տեղի ունեցած առերևույթ հանցանքի կատարման համար, մեղադրյալ Արդյոմ Սուրենի Առաքելյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել՝ իրացման նպատակով սպորինի 8,64 գրամ հաստատված քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց ձեռք բերելու, իր մոտ սպորինի պահելու, 2025 թվականի սեպտեմբերի 22-ին՝ ժամը 12:28-ի սահմաններում Երևան քաղաքի ***** ** հասցե սպորինի տեղափոխելու և հիշյալ հասցեում տեղադրելու համար: Նման պայմաններում Գաբարյանն արձանագրում է, որ մեղադրյալ Արդյոմ Առաքելյանի կողմից վերջին ենթադրյալ հանցավոր արարքը Երևան քաղաքում կատարվել է 2025 թվականի սեպտեմբերի 22-ին, հետևաբար հանցանքի ավարտման պահը որոշելու համար որևէ նշանակություն չի կարող ունենալ, թե իրացման նպատակով որևէ վայրում տեղադրված թմրամիջոցը, երբ է

² Տե՛ս քրեական վարույթ, հատոր 3, թերթեր 73-77:

հայրնաբերվում կամ առհասարակ հայրնաբերվում է, թե ոչ, քանի որ մեղադրյալ Արդյուն Առաքելյանի ենթադրյալ հանցանքն արդեն իսկ ավարտվել է 2025 թվականի սեպտեմբերի 22-ին: Ավելին՝ հարկ է արձանագրել նաև, որ մեղադրյալին առաջադրված մեղադրանքների բովանդակային ուսումնասիրությունից ակներև է դառնում, որ մեղադրյալ Արդյուն Առաքելյանի դերակատարումը թմրամիջոցների ապօրինի ենթադրյալ իրացման գործում պայմանավորված է եղել թմրամիջոցների փաթեթները որոշակի վայրերում տեղադրելով, հետևաբար քրեաիրավական առումով հանցանքի ավարտման պահը որոշելու համար, որևէ նշանակություն չի կարող ունենալ իրացման նպատակով որոշակի վայրերում տեղադրված թմրամիջոցների հայրնաբերման պահը (օրը):

Ամփոփելով վերոնշյալը և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումները, Դատարանը գրնում է, որ թիվ ԱՐԴ/1261/01/25 քրեական գործն ընդդատյա է Արմավիր մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, քանի որ մեղադրյալ Արդյուն Սուրենի Առաքելյանին մեղաագրված երկու դրվագ ենթադրյալ հանցանքների վերջինը կատարվել է 2025 թվականի հոկտեմբեր ամսին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում: (...):»³:

Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱՐԴ/1261/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

³ Տե՛ս քրեական վարույթ, հատոր 3, թերթեր 84-90:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սրտեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, «օրենքի հիման վրա սրտեղծված դատարան» հասկացությունը մեկնաբանելիս նշել է. «Այն երկրներում, որտեղ օրենքը կողիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապարասիան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»⁴:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է. «Ներպետական դատական արյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»⁵:

10. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ⁶:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «1. Առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:

⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին արյանի ընդհանուր իրավասության փարբեր դատարանների դատական փարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական փարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական փարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: (...):»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ փվյալ վարույթն ընդդարյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդարության:

(...)

4. Վարույթն ըստ փարածքային ընդդարության սրացած առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի փարածքային ընդդարությանը:

(...)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում սրանսպու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի փարածքային ընդդարության հարցը: (...):»:

12. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ Ա.Առաքելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ) մեղսագրվել է իրացնելու նպատակով շահադիտական նպատակներով զգալի չափերով թմրամիջոցների ապօրինի ձեռք բերում, պահում և տեղափոխում, արձանագրել է, որ Ա.Առաքելյանին մեղսագրված վերոհիշյալ արարքները հանդիսանում են տևող հանցագործություններ և, որ Ա.Առաքելյանին

մեղսագրվող արարքներից վերջինը դադարել է 2025 թվականի հոկտեմբերի 09-ին՝ Երևան քաղաքի ***** ** հասցեի դիմաց կատարված դեպքի վայրի զննությամբ: Արդյունքում, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը հանգել է հետևության, որ թիվ ԱՐԴ/1261/01/25 քրեական վարույթն ըստ ընդդատության պետք է փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան⁷:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված գործողություններից նույնիսկ մեկի կատարմամբ արդեն իսկ հանցագործությունը համարվում է ավարտված, արձանագրել է, որ Ա.Առաքելյանի կողմից վերջին ենթադրյալ հանցավոր արարքը Երևան քաղաքում կատարվել է 2025 թվականի սեպտեմբերի 22-ին, հետևաբար հանցանքի ավարտման պահը որոշելու համար որևէ նշանակություն չի կարող ունենալ իրացման նպատակով որևէ վայրում տեղադրված թմրամիջոցի հայտնաբերումը կամ դրա հայտնաբերման ժամանակահատվածը (պահը), քանի որ մեղադրյալ Ա.Առաքելյանի ենթադրյալ հանցանքն արդեն իսկ ավարտվել է 2025 թվականի սեպտեմբերի 22-ին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն արձանագրել է նաև, որ Ա.Առաքելյանին առաջադրված մեղադրանքների բովանդակային ուսումնասիրությունից երևում է, որ վերջինիս դերակատարումը թմրամիջոցների ենթադրյալ ապօրինի իրացման գործում պայմանավորված է եղել թմրամիջոցների փաթեթները որոշակի վայրերում տեղադրելով, հետևաբար քրեաիրավական առումով հանցանքի ավարտման պահը որոշելու համար, որևէ նշանակություն չի կարող ունենալ իրացման նպատակով որոշակի վայրերում տեղադրված թմրամիջոցների հայտնաբերման ժամանակահատվածը (պահը):

Արդյունքում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը հանգել է հետևության, որ թիվ ԱՐԴ/1261/01/25 քրեական

⁷ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, քանի որ մեղադրյալին մեղսագրված երկու դրվագ ենթադրյալ հանցանքներից վերջինը կատարվել է 2025 թվականի հոկտեմբեր ամսին՝ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում⁸:

13. Սույն վարույթի նյութերի և Ա.Առաքելյանին ներկայացված մեղադրանքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերջինին վերագրվում են երկու դրվագ՝ շահադիտական դրդումներով, իրացնելու նպատակով թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու, պահելու և տեղափոխելու ենթադրյալ արարքներ: Ըստ առաջին դրվագի՝ Ա.Առաքելյանը շահադիտական դրդումներով, իրացնելու նպատակով ենթադրաբար ապօրինի ձեռք է բերել և պահել զգալի չափերով թմրամիջոց, որն էլ իր կողմից շահագործվող ավտոմեքենայով տեղափոխել և 2025 թվականի սեպտեմբերի 22-ին տեղադրել է Երևան քաղաքի ***** փողոցում, իսկ ըստ երկրորդ դրվագի՝ Ա.Առաքելյանը շահադիտական դրդումներով, իրացնելու նպատակով ենթադրաբար ապօրինի ձեռք է բերել զգալի չափերով թմրամիջոց, պահել է իր կողմից շահագործվող ավտոմեքենայի սրահում և 2025 թվականի հոկտեմբերի 3-ին տեղափոխել է Արմավիր քաղաք, որտեղ մեկ փաթեթը տեղադրել է Արմավիր քաղաքի ***** * ***** փողոցների միջնամասում, իսկ մնացած 27 փաթեթները հայտնաբերվել են 2025 թվականի հոկտեմբերի 5-ին՝ ավտոմեքենայում կատարված խուզարկությամբ: Հետևաբար, Ա.Առաքելյանին վերագրվող ենթադրյալ հանցավոր արարքներից առաջին դրվագը կատարվել (ավարտվել) է 2025 թվականի սեպտեմբերի 22-ին՝ Երևան քաղաքում թմրամիջոցը տեղադրելով, իսկ երկրորդը՝ 2025 թվականի հոկտեմբերի 5-ին՝ Արմավիր քաղաքում կատարված ավտոմեքենայի խուզարկությամբ: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանի քրեական պալատն իր համաձայնությունն է հայտնում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի այն դատողությանը, որ իրացման նպատակով Երևան քաղաքում տեղադրված թմրամիջոցի փաթեթները հայտնաբերելու

⁸ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

ժամանակը վարույթի տարածքային ընդդատությունը որոշելու հարցում էական նշանակություն ունենալ չի կարող:

14. Վերոշարադրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱՐԴ/1261/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր է:

15. Անփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԱՐԴ/1261/01/25 վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտյոն Սուրենի Առաքելյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ) թիվ ԱՐԴ/1261/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ